

**ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԿԱՅԱՍՏԱՆԻՆ
ԵՒ ԱԶՐՊԷՃՅԱՆԻՆ ԿՈՉ ԿՈՒՂՎԷ՝
ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ
ՀԱՄԱՆԱԽԱՐԱՅՆԵՐՈՒ ՀՈՎԱՆԻՒՆ ՏԱԿ**

Երոպական Միությանը կ'ողջունէ Վրաստանի աջակցութեամբ՝ Հայաստանի եւ Ազրպէյճանի գործողութիւնները, որոնք յանգեցուցած են 12 յունիսին Ազրպէյճանի կողմէ 15 հայ գերիներու ազատ արձակման եւ Հայաստանի կողմէ ականապատ տարածքներու քարտէսներու յանձնումին: «Արմէնփրես»-ի համաձայն, այս մասին յայտարարութիւն հրապարակած է Երոպական Միութեան արտաքին քաղաքականութեան բարձրագոյն յանձնակատար Ճոզէփ Դորեյ: «Այս գործողութիւնները Պաքուի եւ Երեւանի կողմէ կարելոր մարդասիրական եւ վստահութեան ամրապնդման ուղղուած **ժեսթեր** են, որոնք, յուսանք, նոր ուղի պիտի հարթեն կողմերուն միջեւ հետագայ համագործակցութեան, ի վերջոյ, բոլոր հայ պահուող անձերու ազատ արձակման, ինչպէս նաեւ ականապատուած տարածքներու բոլոր գոյութիւն ունեցող քարտէսներու յանձնումին համար՝ խուսափելու համար հետագայ մարդկային զոհերէն», նշած է Դորեյ:

Շար.ը՝ էջ 2

**«ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ
ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՉԵՆ ԲԽԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԷՆ»**

Կ'ԸՍԵ ՌՈՍՍԻՈՅ ԴԵՄՊԱՆԸ

Հայաստանի Հանրապետութեան մէջ Ռուսիոյ դեսպան Սերկէյ Զոսիքիքին «Սփուրնիք Արմենիա»-ի հետ գրոյցի ընթացքին ըսած է, որ որոշ ուժեր ու գործիչներ Հայաստանի մէջ հակառուսական եւ նոյնիսկ բացայայտ ռուսատեաց դիրքերէ կը խօսին: «Կը հասկնանք, որ կայ կարծիքներու բազմազանութիւն, սակայն փորձ կը կատարուի ամեն ինչի մէջ մեղադրել Ռուսիան»՝ այն երկիրը, որ եղած է եւ այս դժուար ժամանակաշրջանին մէջ կը մնայ Հայաստանի ու անոր ժողովուրդին կողքին:

Շար.ը՝ էջ 2

**«ԱԶՂԱԿ»-ԻՆ ՏՈՒՄԾ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻՆ ԸՆԹԱՅԵՒՆ
ՅԱԿՈՒՐ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՍՏԱՏԵՑ.**

**«ՊԷՏՔ Է ՉԵՐԲԱՉԱՏՈՒԻԼ ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹԵՆԷՆ, ՈՐՈՒՐ ՊԱՏՃԱՌՈՎ
ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՊՐԵՅԱՒ ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱԳՈՅՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԱՄԷՆԷՆ ԱՂԷՏԱԼԻ ԷՁԵՐԸ՝ ԿՈՐՄՆՑՆԵԼՈՎ ԱՐՑԱԽԻ ՄԵԾ ՄԱՍԸ»**

**«ՉԵՔ ԿՐԵԱՐ ՍՏՈՐԱԳՆԱՀԱՏԵԼ ԴԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ, ՈՐ ԹԷԷԻ
ՏԱԳՆԱՊԱՀԱՐ Է, ՍԱԿԱՅՐ ԿԸ ՊԱՀԷ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ
ՈՉ ՄԻԱՅՐ ՍՓԻՈՒՔԵԱՆ, ԱՅԼ ՆԱԵՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ»**

«Ա.»- Մտահոգիք է քարոզարշաւի հռետորաբանութիւնը: Հայիոյանք, մեղադրանք, բռնութիւն ներառող յայտարարութիւններ. արտակարգ ընտրութիւնները մթնոլորտի թուլացման պիտի նպաստեն՝ ըստ պաշտօնական յայտարարութիւններու, բայց եւ այնպէս ականատես են ճիշդ հակառակին:

Յ. Տ. Խ.- Կասկած չկայ, որ սուտերով լեցուն եւ հայհոյախառն բառամբերքով ընտրարշաւի կիրարկումը այս իշխանութիւններուն բնորոշ յատկանիշ է. անոնք մասնագետ են ժխտական «Փի. Ար.»-ի, ատելութեան սերմանումի, բաժանարար գիծեր ստեղծելու. մասնագետ են յատկապէս բարկացկոտ, ջղագրգիռ եւ ընդդիմադիր տարազով ներկայանալու, հակառակ անոր որ երեք տարիէ ի վեր իրենք են իշխանութիւնը, սակայն քաղաքական դաշտին մէջ եւ ժողովուրդին հետ կը վարին իբրեւ բարկացած ընդդիմութիւն: Անոնք կը գործեն ամենայն անպատասխանատուութեամբ, հակառակ անոր որ վերջին երեք տարիներուն Հայաստանի եւ Արցախի մէջ արձանագրուած բոլոր ծախողութիւններուն իսկական պատասխանատուները իրենք են: Իրողութիւնը այլ է անշուշտ. իրենք ալ ինն ուժ են արդէն. ուստի, կարելի չէ շարունակ ինն ու նորի պատմութիւնը առաջ նետելով՝ մեղքը միշտ փաթթել ուրիշներու վիզէ-

**«ՎԻԵՆՆԱՅԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵ-
ՐԸ ԱՆԵԼԻ ՉՄԱՏՆՈՒԹԵԱՆ,
ԵՒ ԿԸ ԲԱՅԱՌԵՆՔ, ՈՐ ԱՅՍ ՓՈԽԸ
ՎԵՐՋԻՆԸ ԸԼԼԱՅ»**

Կ'ԸՍԵ ԹԵՅՐԱՆ



Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց. «Վիեննայի բանակցութիւնները անելի չեն մատնուած, անոնք ընթացքին կը շարունակուին քննարկուիլ մնացելով կետերը»: Ան միեւնոյն ժամանակ բացառեց, «որ ներկայ փուլը բանակցութիւններուն մէջ վերջինը ըլլայ»:

Շար.ը՝ էջ 8

**ԱԶՐՊԷՃՏԱՆԻ ՄԷՁ
ԹՈՒՐԲԻՈՅ ԴԵՄՊԱՆԸ
ԱՅՅԵԼԱԾ Է ՇՈՒՇԻ**



Ազրպէյճանի մէջ Թուրքիոյ դեսպան Ճահիթ Պաչլը այցելած է արցախեան Բ. պատերազմի ընթացքին Պաքուի վերահսկողութեան տակ անցած Շուշի քաղաք: Ան այս մասին գրած է իր թուիթթրեան էջին վրայ: Ազրպէյճանական «Միւլվալ» կայքը կը հաղորդէ, որ դեսպանը նշած է, որ Շուշի այցելած է Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի այցելութեան ընդառաջ:

«Այսօր մենք կը շնչենք ազատ Դարաբաղի օդը: Մենք կը հաստատենք, որ Շուշին Դարաբաղի սիրտն է ու Ազրպէյճանի դափնեպսակը», գրած է դեսպանը՝ կից Շուշիի մէջ ամռնուած լուսանկարներ հրապարակելով:

Շար.ը՝ էջ 7

ՄԱՔՐՈՆ «ԵՐԿԱՐ ԶՐՈՒՅԱԾ» Է ԷՐՏՈՂԱՆԻ ՀԵՏ

Երեկ Պրիւքսելի մէջ ՕԹԱՆ-ի վեհաժողովի մեկնարկէն առաջ տեղի ունեցած է Ֆրանսայի եւ Թուրքիոյ նախագահներ Էմանուէլ Մաքրոնի ու Ռեճեփ Թայիփ Էրտողանի հանդիպումը: «ՕԹԱՆ-ի վեհաժողովէն առաջ եւ երկար առանձնազրոյց ունեցած են նախագահ Էրտողանի հետ: Յստակութեամբ, յարգանքով եւ պահանջկոտութեամբ յառաջ շարժելու համար», «Թուիթթր»-ի վրայ գրած է Մաքրոն: Ֆրանսայի նախագահը նախապէս յայտարարած էր, որ մտադիր է թուրք գործընկերոջ հետ քննարկել ՕԹԱՆ-ի դաշնակիցներու վարքագիծի կանոնները, ինչպէս նաեւ Սուրիոյ, Լիպիոյ եւ Լեռնային Դարաբաղի մէջ տիրող կացութիւնը: Թրքական «Տողրուիապեր» կայքը կը հաղորդէ, որ Մաքրոնի եւ Էրտողանի միջեւ հանդիպումը տեւած է 52 վայրկեան եւ եղած է դռնփակ:

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ ԲԱԶՄԱՄԱՐԳ
ՀԱՆՐԱՀԱՒԱՔԸ՝ ԵՐԵՒԱՆԻ ՇԷՆԳԱՒԻԹ
ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄԷՁ**



Երեկ՝ երկուշաբթի, 14 յունիսին «Հայաստան» դաշինքի առաջնորդները բազմամարդ հանրահաւաք կազմակերպեցին Երեւանի Շենգաւի վարչական շրջանին մէջ: Ողջունելով հաւաքի մասնակիցները, «Հայաստան» դաշինքի առաջնորդ, Հայաստանի Հանրապետութեան երկրորդ նախագահ Ռոպերթ Յոչարեան նշեց, որ իրենք չափազանց մեծ պատասխանատուութեան տակ կը մտնեն: «Հայաստան ըսելով կը հասկնանք ամուր ոտքերու վրայ կանգնած, ժողովրդավարական, ուժեղ, մարտունակ բանակ, հզօր տնտեսութիւն ունեցող երկիր, որով կը հպարտանանք իւրաքանչիւր: Սիրելի՛ ժողովուրդ, ես միշտ գործի մարդ եղած եմ, սակայն այնպիսի իրավիճակ ստեղծուած է, որ նաեւ խօսող մարդ պէտք է դառնալ, քանի որ ժամանակակից աշխարհին մէջ խօսքի ուժը հզօր է: Այդ խօսքը պէտք է հասցը-

նենք իւրաքանչիւր քաղաքացիի: Ըսէ՛ք բոլորին, որ «Հայաստան» դաշինքը կու գայ ուժեղ Հայաստան կառուցելու», ըսաւ Ռոպերթ Յոչարեան: Ըստ անոր, «Հայաստան» դաշինքը կու գայ թոյնքածել տնտեսական աճ ապահովելու՝ մարդոց կեանքի որակը բարելաւելու համար: Ռոպերթ Յոչարեան կոչ ուղղեց ներկաներուն աշխուժօրէն մասնակցելու ընտրութիւններուն՝ իրենց ծայրը տալով ուժեղ Հայաստանին:

Շար.ը՝ էջ 6

**ԿԱՐԷՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԿԸ ՍԱՏԱՐԷ ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ
«ՊԱՀԸ ՕՐՀԱՍԱԿԱՆ Է,
ՄԱՐՏԱՀՐԱՒԵՐՆԵՐԸ՝ ՎՏԱՆԳԱՒՈՐ»**

Երեկ Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետ Կարեն Կարապետեան հանդէս եկաւ «Հայաստան» դաշինքին եւ երկրորդ նախագահ Ռոպերթ Յոչարեանին սատարելու հետեւեալ յայտարարութեամբ.

20 յունիս 2021-ին նախատեսուած խորհրդարանական ընտրութիւնները չափազանց կարելոր են Հայաստանի ապագայի համար: Պատերազմի հետեւանքով մեր երկիրը յայտնուել է խոր ճգնաժամի մէջ, որի ընթացքը կասեցնելն այսօր իրատապ է: Պէտք է փաստել, որ՝
- բանակի մարտունակութիւնն եապէս նուազել է, խարխուլուած է Հայաստանի ու Արցախի անվտանգութեան ողջ համակարգը,
- աւելացել են լրջագոյն ընկերային խնդիրներ, որոնք պահանջում են բոլոր ինարաւոր պաշարների համախմբում,
- հասարակութիւնում առկայ ներքին պառակտուածութիւնը, գրգռուածութիւնը, թուլութիւնն ու կրաւորականութիւնը քայքայիչ ազդեցութիւն ունեն հասարակութեան ու պետութեան զարգացման վրայ,
- առկայ է պետութեան դերի աղաւաղում, քաղաքական բանավեճը իջեցուած է կենցաղային մակարդակի, պետական համակարգը գործում է ներմղումով եւ ոչ համակարգափոխ,
- ունենք սփիւռքի հետ յարաբերութիւններ, արժեքային համակարգի եւ ազգային գաղափարախօսութեան ճգնաժամ,
- բազմաթիւ այլ խընդիրներ:



Պահն օրհասական է, մարտահրաւերները՝ բազմաշերտ ու վտանգաւոր, իսկ լուծումները՝ սահմանափակ ու բարձր արհեստավարժութիւն պահանջող:

Պէտք է՝
- արագօրէն վերականգնել մեր անվտանգութեան համակարգը,
- մեր երկրում ու տներում հաստատել հանդուրժողականութիւն եւ հանգստութիւն,

ԿԱՐԷՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Հայաստանի նախկին վարչապետ

Շար.ը՝ էջ 6

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆ-ԿԱՄՔ-ԻՆ ԿԸ ՆՈՒՐԵՆ	
• Սերժ Վահե Խաչատուրեանի մահուան առիթով՝	
- ԲաժՖիի եւ Սեւան Պաղճեան	1.500.000 լ. ո.
- Արամ Պաղճեան	1.500.000 լ. ո.
- Ալեքս Պաղճեան եւ Լիլի Չաքարեան	1.500.000 լ. ո.

ԽՕՍՔ ԻՄ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Խօսքս ուղղում եմ առաջին հերթին ինձ ճաշողներին.
- Իմ համագիւղացիներին՝ գառնեցիներին,
- Իմ հազարաւոր ուսանողներին՝ ներկայ եւ նախկին,
- Բոլորին, որոնց հետ սովորել եմ, աշխատել կամ ճանաչել եմ ինչ-ինչ հանգամանքներում:

Այլ կերպ՝ բոլոր նրանց, որոնց համար իմ խօսքը կարող է արժէք ունենալ:

Յունիսի 20-ի խորհրդարանական ընտրութիւնները պարզապէս իշխանութեան ընտրութիւններ չեն եւ ոչ էլ սոսկ կառավարման ճղգնաժամով պայմանաւորուած ընտրութիւններ, որպիսի վիճակի հետ վերջին երկու տարիներին չորս անգամ բախուել է, օրինակ, Իսրայէլի բնակչութիւնը: Առաջիկայ ընտրութիւնները լինելու են 1990-ից ի վեր ամենից վճռորոշ, իսկապէս բախտորոշ ընտրութիւնները Հայաստանի երրորդ հանրապետութեան երեսնամեայ պատմութեան մէջ:

Այս ընտրութիւններն առաջինն են, որոնց արդիւնքներից կախուած է լինելու մեր՝ հինգհազարամեայ պետականութեան պատմութիւն ունեցող ժողովրդիս, պետութիւն ունենալ-չունենալու, իբրեւ ազգ՝ համաշխարհային մեծ ընտանիքում մեր տեղն ունենալ-չունենալու հարցը: Ստեղծուած իրավիճակի մեծ պատասխանատուութիւնը միաժամանակ աւելի է դժուարացնում կողմնորոշուելու հնարաւորութիւնը: Մեզ յուզող հարցերի մասին կուսակցական-քաղաքական գործիչներից ամեն օր լսում ենք իրարամերժ բացատրութիւններ, առաջարկութիւններ, լուսաւոր ապագայի խոստումներ, եւ բնականաբար հեշտ չէ բառերի այդ լաբիրինթոսում կողմնորոշուելը: Հասարակութեան տարբեր շերտերի հետ շփումները ցոյց են տալիս, որ շատերը դեռեւս մնում են իրենց կանխակալ պատկերացումների գերին, չեն յաղթահարել ազգը «նախկինների եւ ներկաների» բաժանելու կեղծ օրակարգը: Այդ իրողութիւնը վկայում է մէկ բանի մասին. այդպիսի մարդիկ դեռեւս չեն հասկացել մեզ սպասուող ընտրութիւնների իրական նշանակութիւնը: Ազգը «նախկինների եւ ներկաների» բաժանողները հետապնդում են մէկ հիմնական նպատակ՝ նրանք առաջնորդուում են «բաժանիր, որ տիրես» սկզբունքով, որը բացառապէս կոչուած է սպասարկելու իրենց անձնական-կուսակցական շահերը: Դա խորամանկ, բայց թոյլ մարդկանց սկզբունք է, իսկ թոյլ մարդիկ չեն կարող ուժեղ դեկալարւնէր լինել, հետեւաբար չեն կարող պետութիւն ու ժողովուրդ առաջնորդել: Ցանկացած մակարդակի իշխանութեան, առաւել եւս համապետական առաջնորդի ընտրութիւնը չի կարելի կատարել զգացմունքներով, անձնաւորւած համակրանքներով ու հակակրանքներով, առաւել եւս՝ այրուրդեկան մանրախիւնդի հաշտարկներից ելնելով: Մեր կարծիքով, այդպիսի ընտրութիւններում պիտի առաջնորդուել մի քանի հիմնական չափանիշներով, որոնցից ինքնաբերաբար կարող են բխել ընտրութեան սկզբունքները: Այդպիսիք կարող են լինել հետեւեալները:-

1) Անբերի իշխանութիւններ չեն լինում, ինչպէս որ չկան անբերի մարդիկ: Այս իրողութիւնը միշտ ունի ինչպէս ենթակայական, այնպէս էլ առարկայական կողմ, բայց դրանց քննութիւնը մեզ շատ հեռուն կը տանի եւ կը շեղի բուն խնդիրներէ:-

2) Ոչ մի պարագայում պետութեան ղեկը չի կարելի վստահել պետական կառավարման բաւարար փորձ չունեցող, առաւել եւս՝ այդպիսի փորձից ի սպառ զուրկ մարդկանց: Հայաստանի ներկայ վիճակը ցոյց է տալիս, որ այդ սկզբունքի կարեւորութիւնը չափազանց մեծ է յատկապէս մեր տիպի ժողովուրդների համար, որոնք ունեն չլուծուած ազգային հիմնահարցեր, հետեւաբար՝ տարածաշրջանային խընդիրներ հարեաւանների հետ եւ գտնուելով աշխարհաքաղաքական հետաքրքրութիւնների խաչմերուկում՝ մշտապէս ենթակայ են արտաքին ազդեցութիւններին:

3) Զի կարելի ընտրել աշխարհաքաղաքացիների (կոսմոպոլիտների), որոնք իրենց մութ, ապագային հայեացքներով աւելի շատ հակուած են դառնալու օտար շահերի սպասարկուները մեր երկրում, քան՝ ծառայելու սեփական ժողովրդի բարօրութեանը:

4) Զի կարելի ընտրել ամբոխավարների (պոպուլիստների), որոնց խօսքն ու գործը, որպէս կանոն, հակասում են միմեանց:

5) Զի կարելի ընտրել ստախօսներին եւ ամբարտաւաններին, որոնց համար գոյութիւն չունեն թապուներ եւ կարմիր գծեր: Որոնք այդ պահի իրենց խընդիրները լուծելու համար պատրաստ են ուրանալ ամեն ինչ եւ բոլորին:

6) Առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները ոչ մի դեպքում չի կարելի դիտել իբրեւ կենցաղային հարցեր լուծելու միջոց: Մի բան, որը այս կամ այն չափով դրսեւորուել է նախորդ գրեթէ բոլոր մակարդակների ընտրութիւններում:

7) Պիտի մերժել ամենից բարձր եւ սուր հայիոյողներին, անկախ այն բանից՝ նրանք հայիոյում են օրոպա իշխանութեանը, թէ հիմնական ընդիմադիր ուժերին, որովհետեւ այդպիսիները փորձում են ինքնահաստատուել երկու կողմներից դժգոհ ընտրողներին մոլորեցնելու միջոցով՝ ներկայանալով իբրեւ թէ երրորդ այլընտրանք, բայց հենց այդպիսիներն են դառնում վաղուայ ամբոխավարները:

Թուարկուած չափանիշները առարկայականօրէն գնահատելու դեպքում, կարծում ենք, պարզ կը դառնայ, որ առաջին հերթին պիտի մերժել նիկոլին ու նիկոլիզմը՝ իրենց բոլոր ճիւղաւորումներով: Նիկոլիզմը սման է քաղցկեղի, որը ամեն օր հիւծում է մեր ազգային Ոգին, Միտքը եւ Դիմադրողականութիւնը:



Իշխանութիւն ընտրելու առաջին եւ ամենից կարեւոր չափանիշը պիտի լինի գործը: Այդ առումով մեզանից շատերը անցած երեսու տարիների ընթացքում տեղի ունեցածի ակնատեսներն են եւ անաչառ մօտեցման դեպքում դժուար չէ տեսնել, ով կամ որ ուժերն են եղել պետականակերտ գործի իրական նախանձախնդիրներն ու կրողները: Որոնք են, որ, իրենց բոլոր թերութիւններով ու բացթողումներով հանդերձ, ոչինչ չեն խնայել յանուն համազգային մարտահրաւերների դիմակայելու եւ ունեն դրանք յաղթահարելու բաւարար ներուժ: Առարկայականօրէն (տարիքի բերումով) այդ հնարաւորութիւնից զըրկուած են երիտասարդները, հենց որոնք էլ, մի կողմից, կենսափորձի պակասի, միւս կոմից՝ իրենց եռանդի պատճառով եղան 2018-ի ապրիլ-մայիսի ազգային աղետի հիմնական շարժիչ ուժը՝ մեծահասակների մի մասի թեթեւածեղ առաջնորդութեամբ: Մնում է յանուն մեր իսկ շահերի անկողմնակալ կերպով վերլուծել նախորդ երեսնամեակի մեր տեսածն ու ապրածը եւ ըստ այդմ առաջնորդել նաեւ երիտասարդութեանը:

Արտահերթ խորհրդարանական ընտրութիւններում մասնակցութեան յայտ ներկայացրած՝ ընդդի-



մադիր դաշտի քաղաքական կուսակցութիւնների եւ դաշինքների մի մասն ունեն փորձառու առաջնորդներ եւ զգալի տնտուր ներուժ, բայց իմ համոզումն է, որ պետական կառավարման ամենից մեծ դրական փորձ եւ ներուժ ունի «Հայաստան» դաշինքը՝ երկրորդ նախագահ Ռ. Քոչարեանի առաջնորդութեամբ: Միւս բոլոր ազգային ուժերի հանդէպ իմ յարգանքով հանդերձ (ի դէպ, նրանց մի մասի շարքերում եւ ունեն նաեւ լաւ բարեկամներ), առաջին հերթին «Հայաստան» դաշինքն եմ համարում այն քաղաքական ուժը, որը ի գօրու է երկիրը դուրս բերել ներկայ համակողմանի խոր ճգնաժամից եւ դնել զարգացման գծերի վրայ:

Երկու անգամ՝ 1998-ին եւ 2003-ին, եւ ոչ միայն ընտրել եմ Ռ. Քոչարեանին Հայաստանի նախագահի պաշտօնում, այլեւ եղել եմ նրա քարոզարշաւի գործուն մասնակիցներից մէկը: Ընդ որում՝ այն դեպքում, երբ երկրորդ նախագահի հիմնական մրցակիցները ծանրակշիռ քաղաքական եւ պետական գործիչներ էին, այլ ոչ թէ՝ նիկոլներ: Այսօր աւելի մեծ համոզումով պատրաստ եմ կրկնելու նոյնը, որովհետեւ, հետադարձ հայեացքով նայելով մեր անկախ պետականութեան երեսնամեայ ուղուն, տեսնում եմ, որ Ռ. Քոչարեանի պաշտօնավարման տասը տարիները (1998-2008) եղել են, պայմանականօրէն ասած, մեր պետականութեան ոսկէ դարը (այս միտքը նախընտրական չէ. նոյն գնահատականը եւս հնչեցրել եմ դեռեւս 6 ամիս առաջ՝ դեկտեմբերի 11-ին, «Yerker.am»-ի իմ հրապարակման մէջ, երբ նոր-նոր էր թափ հաւաքում Հայրենիքի փրկութեան շարժումը): «Հարգաւնալ՝ չգիշելով», ահա այն կարգախօսը, որով 1998-2008 թթ. առաջնորդուէր Հայաստանի պետական նաւը՝ աննախադէպ նուաճումներ արձանագրելով մեր ազգային-պետական կեանքի բոլոր ոլորտներում: Երկրորդ նախագահը ցոյց է տուել, որ ինքը գիտակ, կամային յատկանիշներով օժտուած, դժուարութիւնները սառնասրտօրէն դիմակայող, յաջողութիւններից արագ չոգեւորուող, մեծ նախաձեռնութիւնների ընդունակ եւ դրանց կենսագործման հարցում հետեւողական, համաշխարհային քաղաքական եւ տնտեսական զարգացումների միտումներին համաչափ քայլ պահող եւ, որ շատ կարեւոր է, ընդգծուած ազգային դիմագիծ ունեցող քաղաքական-պետական գործիչ է: Ընդ որում՝ մասնագիտութեամբ լինելով **թեքնոկրատ** եւ ունենալով հիմնաւոր ռուսական կրթութիւն: Այն գործիչը, որի ներկայութիւնը պետական բուրգի գագաթին այս պահին օդ ու ջրի պէս կենսական անհրաժեշտութիւն է մեր հայրենիքի համար: Այն գործիչը, որի քաղաքական վերադարձը ամենից քիչը կը ցանկանային մեր թշնամիները:

Յարգելի՛ հայրենակիցներ, Ձեզ կոչ եմ անում վեր կանգնել այս օրերին նախընտրական ստոր հաշվաւորելիք բխող զանազան անհիմն, յաճախ՝ քսողների շահարկումներից ու բամբասանքներից եւ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններում բեւեարելի խորուստ «Հայաստան» դաշինքի եւ նրա առաջնորդ Ռ. Քոչարեանի:

ՎԱՐՄԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԵՊՅ ընդհանուր լեզուաբանութեան ամպիոնի վարիչ

7. 06. 2021

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁԻ ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՅՆԱԼ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ



Հակառակ երկրին մէջ տիրող ընկերատնտեսական եւ առողջապահական վիճակին՝ Ազգային Միացեալ վարժարանը մասկապարտեզի 2020-2021 տարեշրջանի Ծաղիկ դասարանի ամավերջի վկայականաց բաշխման հանդեսով կարողացաւ իր յարկին տակ ստեղծել ուրախ եւ խանդավառ մթնոլորտ մը:

Չորեքշաբթի, 9 յունիս 2021-ին, երեկոյեան ժամը 6:00-ին վարժարանի «Ժիրայր եւ Յովիէ հաջատուրեան» սրահին մէջ կազմակերպուած հանդիսութիւնը կը վայելէր Լիբանանի հայոց թեմի բարեջան առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի հովանաւորութիւնը: Հանդիսութիւնը կը սփռուէր նաեւ առցանց՝ վարժարանի Դիմատետրի էջով:

Լիբանանի, Հայաստանի եւ Ազգային Միացեալ վարժարանի քայլերգներու ունկնդրութենէն ետք սրահ մուտք գործեցին 2020-2021 տարեշրջանի Ծաղիկ դասարանի 40 շրջանաւարտները, որոնք իրենց անմեղ ծախսներով բեմ բարձրացան եւ ներկաներուն փոխանցեցին կենսելի հանդէպ իրենց յոյսի եւ հաւատքի ապրումները: Չուգահեռաբար ցուցադրուեցաւ տեսերիզ, ուր իւրաքանչիւր աշակերտ հայրենիքի բռնագրուած եւ անկախ շրջաններու անուններով նկարուած էր: Սրահի բեմն ու յարակից մասերը իւրայատուկ կերպով զարդարուած էին այս առիթով:

«Դէպի փայլուն ապագայ» կարգախօսով բոլոր աշակերտները կարճ եւ գիրար մարողացնող միտքերով առանձին ներկայացան հանդիսատեսներուն՝ անդրադառնալով իրենց սորվածներուն ու ապագայի խոստումներ տալով: Ապա անոնք հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով խմբային երգեցողութիւն կատարելով՝ խանդա-



վառեցին մթնոլորտը: Տարբեր լեզուներով քանի մը աշակերտներ, բարի գալուստ մաթթելէ ետք, ներկաներուն փոխանցեցին իրենց սրտի խօսքերը, որոնց ընդմէջէն հրաժեշտ տուին մասկապարտեզի ջերմ կեանքին եւ ուրախ խաղերուն, ինչպէս նաեւ ցոյց տուին իրենց պատրաստակամութիւնը՝ անցնելու նախակրթարանի Ա. դասարան:

Մասկապարտիզայան Ծաղիկ Յովսէփեան-Յարութիւնեան այս առիթով արտասանած իր խօսքին մէջ նկատել տուաւ, որ նոր յոյս մըն է 2020-2021 տարեշրջանի Ծաղիկ դասարանը, որուն ստանալիք վկայականը սկիզբ պիտի դնէ աշակերտներու կրթական վերելքին, դիտել տալով, որ անոնց ներկայութիւնը հպարտութիւն կը պատճառէ եւ յաղթանակի զգացում կը ներարկէ:

Ապա ան խօսեցաւ անցնող ոչ սովորական կրթական տարեշրջանին մասին, որուն ընթացքին դասաւանդութիւնները կատարուեցան առցանց՝ տարբեր ծրագիրներով, միշտ փորձելով նշել հայկական եւ միջազգային տօները, հանդիսավմեր կազմակերպել տարբեր ասպարեզներու մէջ աշխատող մասնագէտներու հետ, որպէսզի աշակերտները նախ ծանօթանան ու ապա ընդլայնեն իրենց միտքերն ու հորիզոնները: «Ամբողջացուցիք մասկապարտեզի բոլոր դասարաններու ուսումնական ծրագրերը ու այս դժուար փուլը յաղթահարելով՝ աշակերտը պահեցիք դասի մթնոլորտին մէջ: Յոյսով ենք, որ շուտով «Քորոնա» համաճարակին պատճառով ստեղծուած այս կացութիւնը կը վերանայ, մեր աշակերտները կը վերադառնան դպրոց եւ վերստին կը գտնեն աշակերտի բնականոն ապրելակերպը, կ'ապրին ու կը

վայելեն մասկապարտեզի ուրախ մթնոլորտը, դասերն ու ուսուցողական ծրագիրները, զուարճալի խաղերն ու պտոյտները», ըսաւ Ծաղիկ Յովսէփեան-Յարութիւնեան:

Մասկապարտիզայանը նաեւ խօսեցաւ հայ դպրոցի կարեւորութեան մասին՝ հաստատելով, որ հայ դպրոցին մէջ մեր զաւակները գոյութեանկան իմաստ պիտի տան մեր հաւաքակալութեան, որովհետեւ հայերէն սորվելով, խօսելով ու աղօթելով պիտի կերտեն տիպար հայը ու անոր դատը բարձրացնեն, ուր ալ գտնուին: Ան դիտել տուաւ, որ հայկական գիտելիքներու ու արժէքներու ամբարոմով է, որ պիտի ապահովեն հայ միտքի շարունակականութիւնն ու զարգացումը՝ լուսարձակի տակ առնելով այն իրողութիւնը, որ հայ դպրոց յաճախող աշակերտը ոչ միայն չի գիշեր օտար դպրոց յաճախողին, այլ նաեւ ունի առաւելութիւն, որովհետեւ կը գտնուի միջավայրի մը մէջ, որուն սիրտը հայութիւն կը տրոփէ եւ ընդմիշտ հայութեամբ կ'ապրի:

Ծաղիկ Յովսէփեան-Յարութիւնեան անդրադարձաւ նաեւ ծնողներու կարեւոր դերակատարութեան, որուն նեցուկին ու վստահութեան շնորհիւ կարելի կ'ըլլայ յաջողութիւն կերտել: Անոր համաձայն, յատկապէս այս տարի, առցանց դրութեան պարտադրած պայմաններուն բերումով, ծնողները դարձան օժանդակ կամաւորներ ու հըսեցին իրենց զաւակներու դասին ու տնային աշխատանքներու կատարման՝ տան մէջ ուսուցիչին գործը շարունակելու առաջելութիւնը վերցնելով իրենց ստերուն: Իր խօսքը եզրափակելով՝ ան մարթեց, որ տասներկու տարի ետք Ծաղիկ դասարանի աշակերտները դարձեալ կանգնին նոյն բե-

մին վրայ՝ իբրեւ այս կրթօճախի աւարտական դասարանի աշակերտներ: Ծաղիկ Յովսէփեան-Յարութիւնեան շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսք ուղղեց սրբազան հօր՝ իր օրինութեան ու ազգային վարժարանի աշխատանքներուն յարատեւ աջակցութեան համար, ինչպէս նաեւ՝ պատական մարմիններուն, Պուրճ Համուտի քաղաքապետութեան, ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան եւ մասնաճիւղերուն, բարեսիրական հաստատութիւններուն, «Ինթըրնէշնըլ օրթոթքս քրիսչըն չերիթի» կազմակերպութեան, «Գալուստ Կիւպէնկեան» հիմնարկին, «Աներա» կազմակերպութեան, ԵՈՒՆԻՍԷՃ-ին, անհատ բարերարներուն եւ բարեկամներուն, Ազգային վարչութեան, ուսումնական խորհուրդին, դպրոցի խնամակալութեան ու տնօրէնութեան՝ իրենց մշտական ու օգտաշատ աշխատանքին համար, ապահովելով այս դպրոցի շարունակականութիւնն ու վերելքը:

Վկայականաց բաշխումը կատարեցաւ՝ ձեռամբ Լիբանանի հայոց թեմի բարեջան առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի, պետական երեսփոխան ու վարժարանի խնամակալութեան ատենակապէս, դպրոցի խնամակալութեան ու տնօրէնութեան՝ իրենց մշտական ու օգտաշատ աշխատանքին համար, ապահովելով այս դպրոցի շարունակականութիւնն ու վերելքը:

Վկայականաց բաշխումը կատարեցաւ՝ ձեռամբ Լիբանանի հայոց թեմի բարեջան առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի, պետական երեսփոխան ու վարժարանի խնամակալութեան ատենակապէս, դպրոցի խնամակալութեան ու տնօրէնութեան՝ իրենց մշտական ու օգտաշատ աշխատանքին համար, ապահովելով այս դպրոցի շարունակականութիւնն ու վերելքը:

Հանդիսութեան եզրափակիչ պատգամը լրէց Շահէ արք. Փանոսեան, որ ըսաւ, թէ, հակառակ անոր որ դժուար ժամանակներ կ'ապրինք, բայց եւ այնպէս «մեր ծաղիկները» ամեն տեսակ դժուարութիւն մոռցնել տալով՝ կը յիշեցնեն, որ նաեւ կեանք կայ եւ այդ կեանքին հանդէպ ունինք այնպիսի

Շար.ը՝ Էջ 6

ՀԱՅՐԵՆԻ ՅՈՒՇԵՐ (12)

Մեր արգիլուած գրականութեան ճամպրուկին մէջ կը գտնուէր տրցակ մը, որ ոչ մէկ խորթութեան առարկայ կրնար ըլլալ եւ նախատեսուած էր ծառայելու Դամազգայինի ծանօթացումը կատարելու հայրենի շրջանակներուն մէջ։ Ան տասներկու լայնադիր էջանոց պատկերազարդ ակնահաճոյ հրատարակութիւն մըն էր, ուր ամփոփած էի Դամազգայինի գործունեութեան մէկ սեղմ պատմութիւնը, լոյսին բերած՝ անոր վաթսուսամեայ գործունեութեան այլազան երեսները՝ կրթական, հրատարակչական ու մշակութային։ Ան այս անցուցած էի կարգ մը պարզուական ու դիւրընկալելի փճակազրական թիւեր ու տախտակներ եւ այլն։

Երկրորդ թէ երրորդ առաւօտուն էր, պանդուկի նախամուտքի սեղանիկներուն վրայ դրած էի անոր օրինակներէն, ինքս ալ անկիւն մը նստած՝ կը սպասէի Եափուճեանին, երբ ելեմուտք ընողներէն երկու երիտասարդ վերցուցին մէկական օրինակ ու սկսան «այք մը նետել» անոր էջերուն։

Կ'աճապարէին, այնպէս որ, ենթադրեալ ընթերցումը տեղի ունեցաւ ոտքի։

Քանի մը վայրկեան ետք անոնցմէ մէկը ըսաւ միւսին.



Խաչքարը

գիստ յառաջանալ, եւ կ'ուղղուէինք դէպի խորքը, ուր «ծախին, վերջնաթեր շիրիմը Արամին էր»,- ինչպէս բացատրեց գերեզմանապահը, եւ հետաքրքիր կը կարդայինք շիրիմներու վրայ արձանագրուած տապանագրերը՝ հեռացնելով ձիւնի թեթեւ խաւը, որով երբեմն ծածկուած էին անոնք։ Կը պատահէր, որ ոմանք, չոր ու ցամաք անուն-մականունէն անդին անցնելով, ըլլային գողտրիկ պատառիկներ՝ ատյոթներ, փիլիսոփայական խոհեր, մինչեւ իսկ գեղարւեստա-

դարպաս մը.

- Է՛ս ա, հրամեցէ՛ք...

Ու իջանք։

Մեր առջեւ կը պարզուէր խորիւրդաւոր հսկայական կառոյց մը, որ խճողուած էր մարմարակերտ պսպըղուն շիրիմներով, այլազան կոթողներով, դամբարաններով ու աշտարակներով։ Եթէ քարակերտ հատուկեմտ խաչերն ու հրէշտակները(4) չըլլային, դժուար թէ մէկը կարենար գուշակել, թէ կը գտնուէր գերեզմանոցի մէջ. ան շատ աւելի կը նմանէր համատարած թանգարանի՝ բաց երկինքի տակ։ Այստեղ կային հանգստարաններ, որոնք պէտք էր արժած ըլլային ապարանքի մը գինը, ո՛չ պակաս, այնքան շքեղ էին ու տպաւորիչ։

Մենք կը քալէինք տարածքը մէջտեղէն կիսող ճամբայէ մը, ուրկէ միջակ ծաւալով կառք մը կրնար հան-



Շիրիմը. ծախի յուշաքարը Նոր Է

- Արա, Էս մեր Լեւոնը ե՛րբ ա ժամանակ ունեցել էքքան բան անելու սփիւռքում։

- Մի՛ հաւատար, փչում ա, Էդ շաշ(1) արեւմտահայը(2) իսկական աճապար ա, Նրա ամեն ասածին պէտք չի հաւատալ։

- Ես էլ եմ Էդպէս տպաւորուած...

- Ա՛ռ Նրա հրապարակային խումբանավարի ելոյթները, իսկական խուլիկան...

Ապա արհամարհանքով պրակները նետեցին առած տեղերը ու հեռացան։

Ուրեմն այս «ընթերցողներս» Լեւոն Շանթի Դամազգայինը կը շփոթէին Լեւոն Տէր Պետրոսեանի Դայոց Դամազգային շարժումին հետ. ասոր «շիլ» ու «արեւմտահայ» ըլլալու յատկութիւններն ալբարդելով միւս «առաքինութիւններուն» վրայ։

Ուրկէ ուր յիշեցի Շահնուրի «Առաւօտեան շեփորը», որուն հերոսուհին՝ Աղւանին, մտահոգ կը յարէ Նշանածին՝ Աւոյին (երկուքն ալ կապուելիք խենթեր-Շ.Շ.)...

- Երկուքիս ալ անունը Ա-ով կը սկսի։ Մեր ճերմակեղէններուն վրայ միշտ Ա. մառքան(պիտակը) պիտի ըլլայ։ Է՛յ, ան ատեն ինչպէ՛ս իմ ճերմակեղէններս քուկիներէն պիտի գանազանենք։

Անոն, իր կարգին, մտահոգ նման զուգահայտութեամբ մը, կը հակադարձէ.

- Քա Աղւանի, ադ ի՛նչ գէշ լուր տուիր...։

- Դապա՛ս,- կը շարունակէ Աղւանի իր գիտով հպարտ,- շա՛տ գէշ լուր...։ Շելլաս իմ ըմպիւնեզոններս հազնիս...։ Ան ատեն Ես ալ ըսուփաջալը վարտիքներդ կը հազնիմ...հա՛ր...հա՛ր...հա՛ր...։

Անուններու նոյնպիսի շփոթ մըն էր, որ տեղի կ'ունենար մտքին մէջ այս երկու արեւելահայերուն, որոնք, յստակ էր, բացարձակապէս ոչ մէկ գաղափար ունէին Շանթի ու անոր գործին մասին։ Իսկ մենք այս միջավայրին մէջ է, որ պիտի ջանայինք Դամազգայինի հայրենի մասնաճիւղ հիմնել, արեւմտահայ մշակոյթ ծանօթացնել ու տարածել։

- Քեզի լաւ լուր մը,- բարձր տրամադրութեամբ մօտեցաւ Եափուճեան։ - Իմացայ, որ Արամ Մանուկեանի շիրիմը անվթար պահպանուած է, հասցէն ալ ունիմ, երթանք,այցե՛կենք։

- Կատա՛կ կ'ընես,- չկրցայ հաւատալ։ Որովհետեւ իմ մէջս վառ մնացած էր Գեորգ Արովի այն վերջնագիրը, թէ՝ «Մենք չենք մոռացել, որ պիտի ջնջենք «Երկրից առ յաւետ սեւ ֆաշիզմի հետ «Նաեւ հետքն իսկ ձեր, ո՛չ, չենք մոռացել»։

Եւ անշուշտ մինչեւ հիմա որոշումսին գործադրած պէտք էր ըլլային։

Ուրեմն անկիւնները՝ հոս-հոն, մոռցուած բանե՛ր մը մնացեր էին։

- Ո՛րք Է այդ շիրիմը,- հարցուցի թերահաւատ։

- Թոխմախ գէօլ,- եղաւ պատասխանը։

- Ըսածիդ կ'անդրադառնա՛ս. ի՛նչ ըսել է «Թոխմախ գէօլ», մէկը հետդ չար կատակ ըրած է. թոխմախ կը նշանակէ «թակ», փայտեայ խոշոր մուրճ, իսկ գէօլ-ն ալ կը նշանակէ «լիճ»։ Կրնա՛ս գերեզմանի այսպիսի զաւեշտական անուն մը պատկերացնել Երեւանի մէջ։

- Դիմա լեզուաբանութիւն մի՛ ըներ գլխուս, ա՛յս Է անունը,- ըսաւ ինքնավստահ ու մօտեցող վարձակառք մը կեցուց՝ «Թոխմախ գէօլ» թելադրելով վարորդին(3)։

- Խնդրեմ,- ըսաւ վարորդը եւ հրաւիրեց, որ ելլենք։

Ուրեմն ճի՛շդ Է եղեր, այս անունով գերեզմանոց կայ եղեր...

Քանի մը վայրկեան ետք կանգ առինք երազային լիճի մը ափին, փոքրիկ Սեւան մը, որմէ քանի մը քալ անդին կը բացուէր հսկայ



Գերեզմանը

կան բնոյթի կարճ ստեղծագործութիւններ։

Գրութեան լեզուն ընդհանրապէս հայերէնն էր, երբեմն՝ ռուսերէնով խառն, սակայն կային նաեւ միջին ռուսերէն գրուածները, որոնք միշտ ռուսերու չէին պատկանել անշուշտ, այլ կը կրէին հայկական մականուններ, որոնց տէրերը, վստահաբար ննջեցեալներ-



Վարդավառի լիճ (Թոխմախ գէօլ)



Վարդավառի լիճ (Թոխմախ գէօլ)

րը իրենք եւս, բոլորովին խզուած ըլլալ կը թուէին հայերէնէն եւ մինչեւ անդրշիրիմ ալ կառչած կը մտային իրենց այդ նախընտրութեան։

Հասանք մատանաշուած շիրիմին, որ ծածկուած էր ձիւնի թեթեւ խաւով մը. երբ քերթինք զայն, ապա մեր աչքերուն առջեւ պարզուեցան ննջեցեալին անունն ու մականունը, թուական մը եւ ուրիշ ոչինչ, որոնք արձանագրուած էին շատ պարզ ու անպաճոյճ սալաքարի մը վրայ, որ կարծես ժամանակին հետ իւժճած էր։ Իսկ գլխուն վերեւ կը բարձրանար պատկառելի խաչքար մը, որ բոլորովին Նոր էր եւ իր թարմութեամբ կը հակադրուէր շիրմաքարի դահուլթեան։ Այդ նոյն խաչքարին կից գտանք փոքրիկ խնկաման մը՝ Նոր հանգած խունկով ու մոխիրով։

Ուրեմն Արամ Մանուկեան գինք յիշող ու իրեն այցելող ունէր։

Այս ալ կը նշանակէր, որ ան առարկայ կը դառնար Նոր արժեւորումի մը, Նոր խաչքարն ու թարմ խունկը այդ գուշակել կու տային։ Եւ չէի սխալել, ասոր յուզիչ բացատրութիւնը պիտի ունենայի քանի մը օր ետք։

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԱՅԵՆՆ
armenag@gmail.com

- 1.- Շիլ։
- 2.- Լ. Տէր Պետրոսեան արեւմտահայ Է, կաթողիկէ համայնքի գաւազ, ծնողը գինք 1946-ին խանձարուրի մէջ Զալէպէն Դայաստան բերած էին։
- 3.- Ծանօթ է նաեւ «Կեդրոնական գերեզման» անունով։
- 4.- Մանրակար սերովքներն ու քերովքները։

«Ո՞Վ Է ՎԱԽՅՈՂԸ»... ԱՐՓԻ ՏԱՏՈՅԵԱՆ ԱՍՏՂԸ ՄԱՐԵՑԱԻ

Էտուըրտ

Ալպիի գերագուցցիկ՝ «Ռ՞Վ Է Վախ-ցողը Կիրճի-նիա Վուլ-ֆէն» թատերական գործին մէջ, Մ ա թ ա յ ի կ եր պ ա ղ ի ն ուժեղ մարմնաւորումով պիտի յիշուի այդ օրերուն բեմական իր ա ռ ա ջ ի ն ն եր կ ա յ ու թ իւնը փաստող Արփի Տատոյեանը։



Այդ յանդուգն եւ «խնդրայարոյց» գործը բեմ հանած էր Վարուժան Խողջեան, որ Լիբանանի հայ թատրոնին Նոր շունչ բերած էր ուշ 60-ականներէն սկսեալ՝ ստեղծած փոթորիկը տարածելով բեմէն անդին, հասնելով մամուլ եւ վիճաբանական ասուլիսներ...

Օրին այս գործն ալ մեծ աղմուկ ստեղծեց։

Ինքնավստահ եւ համարձակ՝ անոր տիպարը շատերու յիշողութեան մէջ կը մնայ որոշմուած անմոռանալի եւ անկրկնելի։ Անտեղի չէր, երբ շատեր գինք հեռաւոր մրցակից մը նկատեցին Լիզ Թելլըրի, որ խաղացած էր Նոյն դերը։

Վարուժան Խողջեանի «Թատրոն 67»-ին հետ բեմ բարձրացաւ Արփին։ Նախապէս ան մաս կազմած էր Դամազգայինի «Լեւոն Շանթ» թատերախումբին։ Այդ օրերուն Պէյրութի մէջ գեղարուեստական ձեռնարկները կը գերազանցէին «փոքր պատերազմներ»-ը։ 50-ական տարիները մոռցուած էին, իսկ «քաղաքացիական պատերազմին» (պայթած՝ 1975-ին) նշոյն իսկ չկար։

Գեղարուեստի տարբեր կալուածներու մէջ իր գագաթի օրերը կ'ապրէր Պէյրութը, իսկ հայկական արուեստը կը կանգնէր առաջին գիծերու վրայ։

Գագաթի օրերն էին նաեւ Արփիին, որ Նոյնքան տպաւորիչ եւ հարագատ ներկայութիւն եղաւ այլ գործերու մէջ կարելու դերեր ստանձնելով, անոնց կարգին՝ «Իտալական յարդէ գլխարկը», «Մարա Սատո»...

Լիբանանեան դժուարահաճ եւ բժախնդիր մամուլն ալ տեղ տրամադրեց այս երիտասարդ եւ «ապագայ խոստացող» աստղին։ Այդ օրերուն եռքի եւ պոռթկումի մէջ էր երիտասարդութիւնը։

Ցոյցեր, հաւաքներ, «Դայտ փարք»-եր։

Արփին այդ սերունդին արտացոլացումն էր, բռնուցք ու թափանցիկութիւն պարտադրողը... բեմին վրայ։

Քանի մը տարի ե՛տք... Փոքր ու մանր պատերազմները գուլիը առին-գացին եւ վերածուեցան ո՛չ միայն մեծ պատերազմի, այլեւ՝ պատերազմներու։

Արփին ալ, պատերազմէն հալածական շատերու պէս, ոտք դրաւ Նոր աշխարհ... «Ազատութեան արծառ»-ին մօտակայքը, անոր հսկողութեան տակ՝ Նիւ Ճըրզի։

Սփիւռքեան արուեստի աշխարհին մէջ իրողական պարապութիւն մը ստեղծուած էր։ Սփիւռքահայ թատերական աշխարհը, պայմաններու բերմամբ, ամուլ վիճակ մը կը մատնէր։

Արփին չլիւսեցաւ։ Կրկին բարձրացաւ բեմ։ Բեմը անոր համար շունչ տուող աշխարհ մըն էր, եւ ան ցոյց պիտի տար գործնապէս՝ ո՛վ էր չվախցողը... բեմէն։

Տարբեր ձեւ ու հարթակ։ Զկար գէթ փոքր ընտրանի մը, որպէսզի թատրերգութիւններ ներկայացնէին այդ օրերուն համեմատաբար Նօսր ու ցանցառ ամերիկահայ գաղութներուն։

Արփին շարունակեց բեմ բարձրանալ։ Մենախօսական ելոյթներ՝ Պէյրութի Ուաթ-Ուաթ թաղամասին մէջ ապրած իր մանկութեան օրերէն հաճելի յուշեր, համով պատմութեանքներ եւ դրուագներ... խմորեղէն բուրդ փուռէն մինչեւ թափօփածութեան մէջ մասնագիտացած նպարավաճառը, որուն մօտ կարելի էր գտնել ամեն տեսակի անկապ բան՝ գամ, շողգամ... պատգամ։

Իր նախահայրերէն ժառանգած Տիգրանակերտի բարբառը ամենայն հարագատութեամբ եւ առանց կմկմալու կը խօսէր՝ մեծ հետաքրքրութիւն ստեղծելով ունկնդիրին եւ հանդիսատեսին մօտ։ 1997-ին, քանի մը վայրկեանով, ան եղաւ պատկերասփիւռի հանրածանօթ խօսնակ Տեղիտ Լեթըրմանի անակընկալ հիւրը (<https://www.youtube.com/watch?v=k052Via-o-Ij>)՝ մեծ տպաւորութիւն ձգելով։

Նաեւ, իբրեւ երգիչ բեմ բարձրացաւ Արփին. ան այդ ձիրքն ալ ունէր եւ կը կատարէր իր երիտասարդութեան օրերուն... «Էր երբեմն»-ի Պէյրութի մէջ։

Քանի մը ժապաւէններու մէջ դեր ստանձնեց եւ գեղանկարչութիւն ալ կիրարկեց Արփին, մինչեւ որ օր մըն ալ՝ ուրբաթ 21 մայիս, 2021-ին անխնայ քաղցկեղը «որսաց» զինք։

Վերջին տարիներուն Արիզոնա փոխադրուած էր. հոն էր, որ կեանքին հրաժեշտ տուաւ Արփին։

Երբեմնի աստղագարդ սփիւռքահայ թատրոնը սուգի մէջ Է դարձեալ։ Դիմակները տխուր են։

Արփիին վերջին արարը աւարտեցաւ։ Վարուժանն ու այլ աստղեր եւս չիջած են արդէն...

Կեանքէն հեռացաւ բեմին վրայ ինքնավստահ, համակրելի, ինքզինք պարտադրող եւ տպաւորող, ժպտուն, դիմակագուրկ «դիմակ» մը՝ Արփի Տատոյեանը։

Ե. Ա.

Պոսթըն - Մասաչուսեթ

ՄԱՀԱՍԵՆ ՖԱԹԹՈՒՀ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ ՏՈՄՍ ԱՊԱՀՈՎԱԾ ԼԻՔԱՆԱՆՑԻ ԵՐԿՐՈՐԳ ՄԱՐԶԻԿԸ



Թոքիո-2020-ի ամառնային ողիմպիական խաղերուն մեկնարկը տրուելէն գրեթէ շուրջ ամիս մը առաջ, աշխարհի տարածքին տարբեր տեսակի մարզածներուն մէջ գտումի մրցումները կը շարունակին եւ մարզիկներ ամէն գնով կը պայքարին ողիմպիական տոմս ապահովելու համար իրենց երկրին համար:

Իրենց կարգին, լիբանանցի մարզիկներն ալ կը պայքարին տոմս ապահովելու համար:

Ուլ Պասիլէն ետք (Նշանառութիւն) Մահասեն ֆաթթուի հանդիսացաւ երկրորդ կին մարզիկը, որ Լիբանանի համար ապահովեց ողիմպիական տոմս մը, այս պարագային՝ ծանրաբարձութեան մրցումներուն:

Նշենք, որ ան այսպիսով հանդիսացաւ առաջին կին մարզիկը, որ այս մարզածելին մէջ Լիբանանի համար տոմս մը կ'ապահովէ:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ

ՇԱՆՎԻԼ-ՊԻՊԼՈՍ՝ 95-64



Լիբանանի պասեթպոլի տղոց Ա. դասակարգի պայտեանութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, երէկ՝ երկուշաբթի, 14 յունիսին Շանվիլ, որ Տիք Մըհտիի մէջ հիւրընկալեց Դիպլոսը, արծաւագրեց բաւական տպաւորիչ յաղթանակ մը՝ 95-64 արդիւնքով (18-12, 45-33, 71-40 եւ 95-64):

Յաղթական կազմին եւ մրցումին ամենէն շատ կէտը նշանակեց Ժոզեֆ Շարթունի (23 կէտ), մինչ անոր խմբակից Էլի Ռըսթոմ նշանակեց 22 կէտ:

Մրցումին իրաւարարներն էին Մարուան Էլօ, Չիատ Թաննուս եւ Ատել Խուէյրի:

«Ա. ԹԵ. ՍԵ. ԷԼ. »

ՌՈԺԷ ՖԸՂԱԼԻ ԼԻՔԱՆԱՆԻ ԳԱՐԱՆԱՅԻՆ ՌԵԼԻՆ ՏԻՏՂՈՍԱԿԻՐԸ՝ 15-ՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ



Նախորդ շաբաթավերջին տեղի ունեցած Լիբանանի 36-րդ գարնանային **ռելիին** տիտղոսակիրը հանդիսացաւ լիբանանցի փորձառու վարորդ Ռոժէ Ֆըղալի, որ այսպիսով այս տիտղոսին տիրացաւ 15-րդ անգամ ըլլալով:

Ռոտրիկ Ռահի գրաւեց երկրորդ դիրքը, մինչ Ռոժէ Ֆըղալի որդին՝ Ալեքս, հանդիսացաւ երրորդ:

Աւարտին տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւնը կազմակերպիչ ակումբին՝ «Ա. ԹԵ. ՍԵ. ԷԼ. »-ի պատասխանատուներուն կողմէ:

Կ՝ՈՒԶՈՒԻ

Ոսկերչատուն մը կարիքը ունի ոսկերիչի (սետեբեր) մը, նաեւ մոմի վրայ աշխատող օրիորդի մը: Դիմել՝ հեռ. 76-464763:

ՃԱՏՐԱԿ

ՄԱՆՈՒԷԼ ՊԵՏՐՈՍԵԱՆ՝ ՍՏԵՓԱՆ ԱՒԱԳԵԱՆԻ ՅՈՒՇԱՄՐՑԱՇԱՐՔԻ ՏԻՏՂՈՍԱԿԻՐ

Երէկ՝ երկուշաբթի, 14 յունիսին Ջերմուկի մէջ աւարտեցաւ Ստեփան Աւագեանի անուան ճատրակի միջազգային յուշամրցաշարը:

Առաւելագոյն 9 կէտէն 5,5 կէտ ապահովելով՝ մրցաշարքին տիտղոսակիր դարձաւ **կրանտմասթըր** Մանուէլ Պետրոսեան:

Ան այսպիսով տիտղոսին կը տիրանայ յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով:

Նոյնքան կէտ ապահոված Շանթ Սարգսեան գրաւեց երկրորդ դիրքը:

Իսկ Արամ Յակոբեան, Սամուէլ Տէր Սահակեան եւ Տիգրան Յարութիւն-



եան, որոնք ապահովեցին 5-ական կէտ, բաժնեցին 3-5-րդ դիրքերը:

Այս մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին տասը ճատրակ խաղացողներ:

ՃԱՏՐԱԿ

ԱՐՈՆԵԱՆ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ՌԱՃԱՊՈՎԻ ՀԵՏ

Ռումանիոյ մայրաքաղաք Պուրէշի մէջ տեղի ունեցած «Կրանտ-Չես-Թուր»-ի ճատրակի միջազգային մրցաշարքի 9-րդ եւ վերջին հանգրուանի ճակատումներուն, հայրենի **կրանտմասթըր** Լեւոն Արոնեան, որ ճերմակ քարերով մրցեցաւ ագրպեյնացի Թէյմուր Ռաճապովի դէմ, արծաւագրեց հաւասարութիւն մը՝ 14-րդ շարժումին:

Առաւելագոյն 9 կէտէն 5 կէտ ապահովելով, Արոնեան գրաւեց երկրորդ դիրքը:



Տիտղոսին տիրացաւ ագրպեյնացի Շահրիար Մամետարով, որ ապահովեց 6 կէտ:

ՅԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՌԻՍՈՒՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՒԱՔ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ԱՔՈՎԵԱՆԻ ՄԵՋ

Հայաստանի ծանրաբարձութեան տղոց հաւաքականը սկսաւ ողիմպիական խաղերու նախապատրաստական վերջնական հանգրուանին, այս մասին յայտնեց Հայաստանի ծանրաբարձութեան ֆետերասիոնի մամլոյ քարտուղարութիւնը:

Աթլետիկ մարզահամալիրին մէջ տեղի ունեցող այս ուսումնամարզական հաւաքը տեղի կ'ունենայ մարզիչ Վիգէն Խաչատրեանի գլխաւորութեամբ:

Թոքիոյի 32-րդ ամառնային ողիմպիական խաղերուն մասնակցելու կարելիութիւն պիտի ստանան Սիմոն



Մարտիրոսեան եւ Իզապելլա Եայլեան:

Հայաստանի հաւաքականին ուսումնամարզական հաւաքը նախատեսուած է մինչեւ յուլիսի կէտը:

Հաւաքին կը մասնակցին 14 մարզիկներ:

ԱՐՏԱԿ ԵԴԻԳԱՐԵԱՆ ՀԵՌԱՑԱՒ ԱՐԱՐԱՏ-ԵՐԵՒԱՆԵՆ

Արարատ-Երեւանի մամլոյ քարտուղարութիւնը կը տեղեկացնէ, որ ակումբին մաս կազմող 31 տարեկան ֆուլթալիստ Արտակ Եդիգարեան այսուհետեւ ելոյթ պիտի չունենայ այդ ակումբի կազմին հետ, որովհետեւ հեռացաւ անկէ:

Ան նախորդ տարեշրջանի մեկնարկէն առաջ միացած էր Արարատին, որուն հետ ընդամենը կատարեց 22 մրցում:



ԱՐԱՄ ՔՈԶԱՐԵԱՆ ՀԱՆԴԷՍ ՊԻՏԻ ԳԱՅ ՓԻՒՆԻԿԻ ՀԵՏ

Հայաստանի ֆուլթալի բարձրագոյն դասակարգին մէջ հանդէս եկող կազմերէն Փիւնիկ Երեւան ֆուլթալի ակումբին մամլոյ քարտուղարութիւնը յայտնեց, որ միջնապահ Արամ Քոչարեան միացաւ կազմին:

25 տարեկան ֆուլթալիստը, որ Բանանց Երեւանի (Ներկայիս՝ Ուրարու) սան է, նախապէս մաս կազմած է Արարատի, Լոքոմոթիվի, Գանձասարի եւ Լոռիի:



«ԵՒՐՕ-2020»

- ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՆԱԿՆԿԱԼ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ՝ ՍԼՈՎԱԲԻԱՅԷՆ - ԱՅՍՕՐ՝ ՃՐԱՆՍԱ-ԳԵՐՄԱՆԻԱ ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄ

Երէկ՝ երկուշաբթի, 14 յունիսին, «Եւրո-2020»-ի ֆուլթալի մրցաշարքին չորրորդ օրը, կատարուեցան երեք ճակատումներ:

Ե. խմբակին մէջ, Սպանիա 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Շուէտի մէջ, մինչ Լեհաստան 2-1 արդիւնքով անակնկալ պարտութիւն մը կրեց Սլովաքիայէն:

Սլովաքիա իր յաղթանակի կողմ նշանակեց 69-րդ վայրկեանին:



Ինչ կը վերաբերի երկուսն երրորդ մրցումին, Դ. խմբակին մէջ Զեխիա 2-0 արդիւնքով յաղթեց Սկովտիոյ:

Փաթիլք Շիք նշանակեց Զեխիոյ երկու կոլերը:

Այսօր՝ երեքշաբթի, կը կատարուին երկու մրցումներ՝ 2. խմբակին մէջ:

Առաջինին, որ պիտի սկսի ժամը 19:00-ին (Պելյուրի ժամանակացոյցով), Դոնգարիա կը մրցի Փորթուգալի դէմ, իսկ ժամը 22:00-ին, բաւական զօրաւոր եւ տաք ճակատումի մը ընթացքին, իրարու դէմ կը մրցին Ֆրանսա եւ Գերմանիա:

«ՔՈՓԱ ԱՄԵՐԻԱ»

ՊՐԱԶԻԼԻ ԵՒ ՔՈԼՈՄՊԻՈՅ ՅԱՂԹԱԿԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

Երէկ՝ երկուշաբթի, մեկնարկը տրուեցաւ «Քոփա Ամերիքա»-ի 2021-ի ֆուլթալի մրցաշարքին, եւ անոր առաջին օրը կատարուեցան երկու մրցումներ՝ Ա. խմբակին մէջ:

Պրազիլի մէջ տեղի ունեցող այս մրցաշարքին, դաշտին տերը՝ Պրազիլ, որ 5 անգամ հանդիսացած է աշխարհի պիտիան, սկսաւ վստահ յաղթանակով մը, երբ 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Վենեսուելան:



Յաղթական կազմին կոլերը նշանակեցին Մարքիսիոս (23-րդ), Նեյմար (64-րդ)՝ փենալթիով եւ Կապրիել Պարպոսա (89-րդ):

Նոյն խմբակին մէջ տեղի ունեցած Զոլումպիա-Էքուատոր մրցումը աւարտեցաւ առաջինին յաղթանակով՝ 1-0 արդիւնքով:

Էտուին Զորտոպա նշանակեց Զոլումպիոյ եւ մըրցումին միակ կոլը (42-րդ):

Նշենք, որ այս մրցաշարքը սկզբունքով տեղի պիտի ունենար Զոլումպիոյ եւ Արժանթինի մէջ, սակայն անոնք զրկուեցան այդ իրաւունքէն, առաջինը՝ «Զորոնա» ժաիրին եւ երկրին անկայուն քաղաքական վիճակին պատճառով, իսկ երկրորդը՝ «Զորոնա» ժաիրին երրորդ ալիքին պատճառով:

Նշենք, որ մրցաշարքը տեղի պիտի ունենայ Պրազիլի չորս քաղաքներու մէջ, իսկ աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ 10 յուլիսին, Ռիօ տը Ժանէյրոյի «Մարաքանա» մարզադաշտին վրայ:

ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՄԵՋ . . .

Շարունակուած Ա. Էջն

Երտողան նախապէս յայտարարած էր, որ 15 յունիսին Արցախի մէջ բանակցութիւններ պիտի վարէ Ազրպեյճանի նախագահ Իլիհամ Ալիեւի հետ:

«15 յունիսին Ալիեւի հետ պիտի ուղեւորուիք «ազատագրուած» քաղաքներէն մէկը՝ Շուշի, ուր տեղի պիտի ունենան պաշտօնական հանդիպումներ եւ տարբեր ձեռնարկներ», ըսած էր Երտողան:

Յիշեցնենք, որ Երտողան պաշտօնական այցելութեամբ Ազրպեյճան պիտի գտնուի 14-16 յունիսին:

Այցելութեան ծիրին մէջ Ազրպեյճանի եւ Թուրքիոյ նախագահները 16 յունիսին ներկայ պիտի գտնուին «Եւրո-2020»-ի առաջնութեան մէջ Թուրքիոյ եւ Կալետի ֆուլթալի ազգային խումբերու մրցումին:

Կ՝ՈՒԶՈՒԻ

Հաստատուութիւն մը կարիք ունի վարպետ կաղապարագործներու (**թորնոն**): Դիմել՝ հեռ. 03-244967:

